**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 սեպտեմբերի 2024 թվականի N 959

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԼՈՒՍՅԱ ՆԻԿՈՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 631-Ն որոշման կանոնադրության 9-րդ կետի, 14-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության մշտական գործող հանձնաժողովի հերթական նիստի արձանագրության դրական եզրակացությունը և հաշվի առնելով Լուսյա Առաքելյանի դիմումը՝ իր նկատմամբ թոռանը՝ Ալիկ Պետրոսի Վարդանյանին պատրոն /օգնական/ նշանակելու խնդրանքը որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ, 2-րդ խմբի անժամկետ հաշմանդամ, կողմնակի անձի մշտական խնամքի կարիք ունեցող՝ Լուսյա Նիկողոսի Առաքելյանի/ծնված՝ 1950 թվականի ապրիլի 5-ին/ նկատմամբ թոռանը՝ Ալիկ Պետրոսի Վարդանյանին նշանակել պատրոն /օգնական/:

2. Որոշման մեկ օրինակը տրամադրել Ալիկ Վարդանյանին:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Ախուրյան համայնքի սոցիալական աշխատողին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ձ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024թ" սեպտեմբերի 13
գյուղ Ախուրյան